ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/55, 11.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Էլջեն» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Երքաղլույս» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/3»

Գնման առարկան՝ լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/3» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝
«Էլջեն» ՍՊԸ-ից
գրանցման համար՝ 290.110.33233
հասցե՝ ք. Երևան, Խորենացու 28

Էլջեն» ՍՊԸ-ի
ներկայացուցիչ Հարություն Օհանյան
նույնականացման քարտի տվյալներ՝ 011778511,
տրված 09.08.2021թ.-ին 004-ի կողմից

Պատվիրատու՝
«Երքաղլույս» ՓԲԸ, հասցե
ք. Երևան, Բուզանդի 1/4

ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/3
լուսատեխնիկական ապրանքներ

ԲՈՂՈՔ

I. Գործի նախապատմությունը.

22.03.2022.-ին «Երքաղլույս» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) հայտարարել է թիվ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/3 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): 22.03.2022թ.-ին Մրցույթի հրավերում կատարվել են փոփոխություններ և նույն օրը Տեղեկագրում հրապարակվել են հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարությունը և փոփոխված հրավերը: Մրցույթի գնման առարկան է լուսատեխնիկական ապրանքներ, որոնք խմբավորված են 1 չափաբաժնում (այսուհետ՝ Գնման առարկա): Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը խտրական է և սահմանափակում է մասնակիցների մասնակցությունը

II. Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1) Գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված է, որ Գնման առարկայի.

1.1) Աշխատանքայի միջավայրը պետք է լինի առնվազն -40-ից +40 ջերմաստիճանի պայմաններում:

1.2) Արտաքին տեսքը պետք է լինի օվալաձև կամ էլիպսաձև:

1.3) Մոտնաժային անցքի տրամաչափը պետք է լինի 44-50մմ իսկ մոնտաժման հատվածը խողովակաձև (...):

1.4) Լուսաքանակը պետք է լինի նվազագույնը 5500 լումեն, սակայն նշված չէ թե որ տեստով է իրականացվելու չափագրումը:

1.5) Լարման հաճախականությունը պետք է լինի 50-60Հց: Սակայն ժամանակակից սնուցիչները մեծապես արտադրվում են ավելի լայն տիրույթում 45-63 հերց ու կիրառվում են նաև Եվրասիական տարածաշրջանում:

1.6) Հզորությունը պետք է լինի 50 վատտ իսկ թույլատրելի շեղումը դեպի ներքև -5% է: Դեպի ներքև -5% շեղում նախատեսելը սահմանափակում է մասնակցի նորագույն բարձր լուսատվությամբ լուսատու առաջարկելու հնարավորությունը, որը պետք է համարվի Պատվիրատուի հիմնական նպատակը:

1.7) ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերին կից պայմանագրի նախագծի 1.5., 8.1.1 և 8.15 կետերի համաձայն՝

«1.5 Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 70 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.1.1 Պայմանագրով նախատեսված չափաբաժինը և դրանով սահմանված քանակները և ծավալները Պատվիրատուն կարող է ամբողջությամբ չպատվիրել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ չպատվիրված մասով պայմանագիրը համարվելու է Կողմերի համար լուծված՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, բայց ոչ ուշ, քան 2023 թ.-նի հունվարի 31-ը

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:»:

2) www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված գնումների պլանում Գնման առարկայի մեկ միավորի նախահաշվայի գինը նշված չէ:

3) Հրավերում նշված չէ խողովակների չափը, որոնց պետք է մոնտաժվի լուսատուն, դա զրկում է մասնակցին ամրացման համար խոչընդոտ չհանդիսացող տիրույթում գտնվող տարբերակ առաջարկելու հնարավորությունից:

III. Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն.

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերի համաձայն.

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.»:

Վերոգրյալից հետևում է, որ գնման գործընթացի նպատակն է համարժեք հատուցմամբ ձեռքբերել պատվիրատուի պահանջմունքներին համապատասխանող ապարանք, այն է՝ ապրանք, որը իր որակական և տեխնիկական հատկանիշներով պիտանի է ծառայեցնելու պատվիրատուի լիազորությունների սահմաններում իրականացվող գործողություններին: Ընդ որում Պատվիրատուն պետք է ընդլայնի մասնակիցների շրջանակը, իսկ գնման գործընթացը կազմակերպելիս պատվիրատուի կազմած գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված, ոչ խտրական չառաջացնի չհիմնավորված խոչընդոտներ գնման գործընթացում:

1. Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից՝ Գնման առարկայի տեխնիկական բնութագրում Պատվիրատուն սահմանել է մի շարք հատկանիշներ որոնք անհիմն սահմանափակում են մասնակիցների, մասնավորապես Ընկերության մասնակցությունը Մրցույթին: Այդ սահմանափակումներից են տեխնիկական բնութագրում նշված լուսատուի աշխատանքային միջավայրը, արտաքին տեսքը, լուսատուի մունտաժային անցքի տրամաչափը նշելը և խողովակների չափը չնշելը, որոնց պետք է մոնտաժվի լուսատուն, լուսատուի լուսաքանակի չափագրման

մեթոդաբանությունը չնշելը, լուսատուի լարման հաճախականությունը և «Վատտ»-ի նվազագույն սահմանաչափը նշելը: Մասնավորապես՝

➢ Լուսատուն բնութագրող միջավայրի ազդեցության -40 ից +40 աշխատանքային պայմանը – 40 ներքևի սահմանով ռազմական կամ հատուկ կլիմայական գոտու բնութագրիչ է: Մեր կլիմայական գոտու արդյունաբերական ստանդարտը -20 ից + 50 է: Հետևաբար՝ սահմանելով «-40 - +40» աշխատանքային պայմաններ պատվիրատուն անհիմն սահմանափակում է մասնակիցների, այդ թվում՝ Ընկերության մասնակցությունը գնման ընթացակարգին: Բացի այդ հրավերում նշված չէ թե ինչ թեստ է արվելու և ինչ մեթոդաբանություն է կիրառվելու տվյալ միջավայրում լուսատուի աշխատունակությունը ստուգելու համար:

➢ Հրավերով սահմանված է, որ լուսատուն պետք է ունենա օվալաձև կամ Էլիպսաձև տեսք: Օվալը և էլիպսը երկրաչափական պատկերներ են որոնք հստակ բնութագրվում են Էվկլիդյան երկրաչափության սահմանումներով ու միանշանակ են բոլոր մասնագետների համար: Սակայն Պատվիրատուի սուբյեկտիվ պատկերացումները «օվալաձև/էլիպսաձև» պատկերների վերաբերյալ այլ է, մասնավորապես նախորդ՝ թիվ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով մրցույթի բնութագրում Պատվիրատուն նշել էր, որ ձեռբերման ենթակա լուսատուն պետք է ունենա «օվալաձև» տեսք, սակայն Պատվիրատուի կողմից ներկայացրած նկարը՝ որը պարզաբանում էր Պատվիրատուի համար ցանկալի «Օվալաձև» լուսատուի տեսքը ավելի նման էր Էլիպսին, իսկ այս անգամ Պատվիրատուն օվալաձև և էլիպսաձև բառերի կոմբինացիայով ավելի է շփոթեցնում հնարավոր մասնակիցներին, որպիսի պայմաններում այդ անորոշության պատճառով մեր Ընկերությունը չի մասնակցում նշյալ Մրցույթին, քանի որ Պատվիրատուի սուբյեկտիվ ընկալման պատճառով հնարավոր է, որ մեր կողմից առաջարկված լուսատուի տեսքը չընդունվի որպես օվալաձև կամ էլիպսաձև:

➢ Տեխնիկական բնութագրում մոնտաժային անցքի տրամաչափ 44-50մմ արտահայտությունը առանձին սահմանափակում է ներկայացնում՝ Տրամաչափի իմաստով քանի որ պարտադրում է որպեսզի մոնտաժման անցքը լինի կլոր, քանի որ միայն կլոր մարմինների համար է հատույթը տրամաչափ, ուստի այս պահանջը սահմանափակվում է ոչ կլոր մոնտաժման հատված ունեցող լուսատուներով մրցույթին մասնակցելու մեր և այլ ընկերությունների հնարավորությունը: Բացի այդ հրավերում նշված չէ խողովակների չափը, որոնց պետք է մոնտաժվի լուսատուն, դա զրկում է մատակարարին ամրացման համար խոչընդոտ չհանդիսացող տիրույթում գտնվող տարբերակ առաջարկելու հնարավորությունից:

➢ Հրավերում նշված է նվազագույն լուսաքանակի սահմանափակում 5500 Լմ, սակայն հասկանալի չէ թե որ տեստով է իրականացվելու չափագրումը, և արդյո՞ք իրականացվելու է որև է չափագրում: Չափագրման մեթոդը նշելը չափազանց կարևոր է, քանի որ դա է լուսաքանակի

որոշման ելակետային տվյալը: Ուստի այդ չափագրման մեթոդի բացակայության պայմաններում հնարավոր չէ միանշանակ պնդել այս կամ այն լուսատուի լույսի լուսաքանակի համապատասխանությունը հրավերով սահմանված պայմաններին: Այլ խոսքով՝ այդ չափագրման մեթոդով է, որ պետք է հաստատվի մատակարարված լուսատուի լուսաքանակի համապատասխանությունը հրավերով սահմանված պայմաններին, այլ ոչ թե լուսատուին կից թերթիկում նշվածը:

➢ Հրավերում նկարագրվում է լուսատուի հզորությունը և լուսաքանակը, այս երկու մեծությունները կապված են ՕԳԳ ով ու դրանց առանձին դիտարկելը լուսատեխնիկական գիտության տեսակետից տեղին չէ, հզորության համար -5% ներքևի սահմանափակումը ու նվազագույն լուսաքանակը 5500Լմ պայմանների համադրումը սահմանափակում է մատակարարին նորագույն բարձր լուսատվությամբ լուսատու մատակարելու հնարավորությունը, որը պետք է համարվի Պատվիրատուի հիմնական նպատակը, սահմանափակման պաճառ է հանդիսանում էներգախնայողությունը: Ցանկացած արտադրողի ու գնորդի նպատակն է ունենալ առավելագույն լուսաքանակ 1 Վտ ից: Սակայն այս պայմանի համադրությամբ մատակարարի ապրանքը լուսատվության 5500Լմ պահանջին համապատասխանության ու հզորությունը 40 Վատի դեպքում կարող է մերժվել հրավերով սահմանվածից 20% էներգախնայող լինելու պատրվակով:

Ելնելով վերոգրյալից կորդ ենք փաստել, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը խտրական է և սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը տվյալ Մրցույթին և այդ տեխնիկական բնութագրի պատճառով ձեռք են բերվում ոչ այնքան տնտեսող լուսատուներ, քան կարող էին ձեռք բերվել, եթե տեխնիկական բնութագրերում բողոքում մատնանշված սահմանափակումները չնշվեին: Բացի այդ սհմանափակումների պատճառով շեշտակի նվազում է նաև Մրցույթի մասնակիցների քանակը, ինչի արդյունքում հնարավոր է Մրցույթով սահմանված ապրանքները ձեռքբերվեն ավելի թանկ գնով:

2. Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված գնումների պլանում Գնման առարկայի նախահաշվային գինը նշված չէ: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 18-րդ կետի բովանդակությունից բխում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով գնումը կազմակերպվելու դեպքում գնումների պլանում անհրաժեշտ է նշել գնման առարկայի միավորի գինը, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգի» (այսուհետ՝ Գնումների պլանի լրացման կարգ) 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի համաձայն՝ գնումների պլանում լրացվում է գնման առարկայի մեկ միավորի և ընդհանուր գները, իսկ Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում

կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման: Ուստի համադրելով Կարգի 18-րդ կետի և Գնումների պլանի լրացման կարգի 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի դրույթները կարող ենք փաստել, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և առկա է գնման առարկայի նախահաշվային գին (մեկ միավորի առավելագույն գին), ապա գնումների պլանում նախահաշվային գինը նշելը պարտադիր է, քանի որ այդ պահանջը սահմանված է նորմատիվ իրավական ակտերով և իմպերատիվ է: Հետևաբար, եթե կազմակերպված գնման ընթացակարգում նշյալ պահանջը պահպանված չէ, ուրեմն կարող ենք փաստել, որ տվյալ գնման ընթացակարգը կազմակերպվել է նշյալ նորմերի խախտմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի խախտմամբ, մասնավորապես՝ Կարգի 18-րդ կետի և Գնումների պլանի լրացման կարգի 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի խախտմաբ:

3. ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերին կից պայմանագրի նախագծի 1.5. և 8.1.1 կետերի համաձայն՝

«1.5 Մատակարարումն իրականացվում է Գնորդի կողմից տրված ապրանքի մատակարարման հայտի հիման վրա, Գնորդի կողմից պատվիրված քանակի չափով: Առաջին փուլի մատակարարման ժամկետը 70 օրացուցային օր է, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել կարճ ժամկետում: Հաջորդ փուլերում, մատակարարման ժամկետը՝ հայտը տալու օրվանից հաշված ոչ ուշ 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.1.1 Պայմանագրով նախատեսված չափաբաժինները և դրանցով սահմանված քանակները և ծավալները Պատվիրատուն կարող է ամբողջությամբ չպատվիրել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ չպատվիրված մասով պայմանագիրը համարվելու է Կողմերի համար լուծված՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով, բայց ոչ ուշ, քան 2023 թ.-նի հունվարի 31-ը»:

Նույն պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն) համաձայն՝ ենթակա են ձեռք բերման 1000 հատ լուսատու լեդ 50 :

➢ Ուսումնասիրելով պայմանագրի նախագծի 8.1.1 կետը առաջին հերթին ցանկանում ենք արձանագրել, որ այդ կետը հակասում է Կարգի 56-րդ կետի 9-րդ ենթակետին, համաձայն որի՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Իսկ հակասում է այն պատճառով, որ պայմանագրի նախագծի 8.1.1 կետի բովանդակությունից հետևում է, որ Պատվիրատուն իրեն վերապահել է պայմանագիրը մասնակի չկատարելու իրավունք և չկատարված

մասով ըստ պայմանագրի նախագծի այն համարվելու է լուծված: Փաստորեն նշյալից հետևում է, որ Պատվիրատուն հրավերով ի սկզբանե սահմանել է Կարգին հակասող դրույթ: Բացի այդ մատակարարման համար նման պայմաններ սահմանելը անորոշ է և հստակ չէ, քանի որ այդ պայմաններից հասկանալի չէ, թե վերջիվերջո Պատվիրատուն ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո քանի հատ լուսատու է պատվիրելու մատակարարից, մինչդեռ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մատակարարման՝ ձեռքբերման պայմանները համարվում են Գնման առարկայի բնութագիր և դրանք պետք է սահմանվեն հստակ, բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Ուստի ելնելով նշյալից կարող ենք փաստել, որ հրավերով սահմանված մատակարարման պայմանները ոչ իրավաչափ են և հակասում են Կարգի Կարգի 56-րդ կետի 9-րդ ենթակետին և Օրենքի 13-րդ հոդվածին, քանի որ դրանք սահմանված են ոչ հստակ: Որպիսի պայմաններում սույն Մրցույթին մասնակցելը խիստ ռիսկային է, քանի որ հասկանալի չէ թե Պատվիրատուն ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո ինչ քանակությամբ ապրանք է պատվիրելու մատակարարից, որը կարող է լինել նաև մեր ընկերությունը:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով.

խնդրում ենք՝

- պարտավորեցնել ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-22/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կից ներկայացնում ենք.

1 Բողքի վճարը վճարած լինելը հավաստող փաստաթղթը,

2 Ներկայացուցչի լիազորագիրը:

«Էլջեն» ՍՊԸ-ի
ներկայացուցիչ Հարություն Օհանյան

Digitally signed by OHANYAN HARUTYUN 4009830433